



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՅՆԵՐԸՆ ՎՏԱՆԳՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Լոս Անճելըսի հիւսիս-արեւելեան լեռնային շրջաններուն մէջ աւելի քան շաբաթ մը առաջ ծագած անտառային հրդեհները ծաւալեցան դէպի բնակարանային շրջաններ ու տագնապի մատնեցին Լա Զանիատայն միւնչեւ Սանլէնտ տարածուող գօտիին բնակիչները, ի շարս որոնց՝ բազմահազար հայորդիներ: Յիշեալ շրջաններու բնակիչներէն մեծ թիւ մը հարկադրուեցաւ պահ մը հեռանալ իր բնակարանէն, վտանգէն ու հրդեհի ծուխէն խուսափելու համար:

Հրդեհը պատճառեց զոհեր ու վիրաւորներ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան հաղորդակցութիւններ ունեցաւ Լա Զրեսենթա Հովիտի մեր եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու ծխական պատասխանատուներու հետ, ծանօթանալու համար դէպքերու ընթացքին: Ազգ. Առաջնորդարան հասած տեղեկութեանց համաձայն, հայ ընտանիքներ բարեբախտաբար ծանր վնասներու չեն ենթարկուած:

Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Կիրակի, 30 Օգոստոսին, Հոլիվուտի Ս. Կարապետ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եւ Լա Զրեսենթայի Հայց. Առաքելական եկեղեցիներուն մէջ յատուկ աղօթք մատուցուեցաւ, Ամենակալէն ինչամբ ու անվտանգութիւն խնդրելու համար յիշեալ շրջաններու բնակիչներուն համար:

Չորեքշաբթի, 2 Սեպտեմբերէն ի վեր, հրդեհի գօտին հեռացուած է բնակարանային շատ մը շրջաններէ:

### PRAYERS OFFERED FOR FAMILIES AFFECTED BY THE WILDFIRES

The wildfires which started in the Angeles National Forest over a week ago and which spanned the La Canada to Sunland areas threatened thousand of homes prompting the evacuation of residents in those areas, including many Armenian families, and resulted in casualties and injuries.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was in communication with the pastor of the Crescenta Valley Church and was informed that Armenian families were spared from great damages.

By the ordinance of the Prelate, on Sunday, August 30<sup>th</sup>, 2009, special prayers were offered at St. Garabed Church in Hollywood, St. Mary's Church in Glendale, and the Crescenta Valley Church for all who were threatened by the fire.

Thankfully, by Wednesday, September 2<sup>nd</sup>, the fire had shifted direction and was not immediately threatening residences.